ԱՌԱՋԻՆ — ՏԱՐԻ ԹԻՒ 23
1869
ՇԱԲԱԹ 3 ՄԱՅԻՍ

ԲԱԺԱՆՈՐԴԱԳԻՆ
ԵՒ ՊԱՅՄԱՆՔ
Տարեկան 6 Մէճիտիէ արծաթ
Վեցամսեայ 3ուկէս » »
Եռամսեայ 2 » »
Դուրսերու համար ծանրու ծախքը վրան կ'հաշուի;
Բաժանորդագինը կանխիկ վճարելի է;
Ինչ որ լրագրիս կ'վերաբերի՝ պէտք է ուղղել առ Պ. Ս. Միրզա 'Ի Զմիւռնիա;
Դրսէն եկած յօդուածներուն պատասխանատուութիւնը խմբագրութեանս վրայ չէ:

ԻՐԱՒՈՒՆՔ
ԼՐԱԳԻՐ ՇԱԲԱԹԱԿԱՆ

ԾԱՆՈՒՑՄԱՆ
ԱՄԵՆԱՄԻԿ ՏՈՂԸ
Բաժանորդաց համար . 3 ղրուշ
Բ. անգամին . 2 »
Գ. անգամին . 1ուկէս »
Ոչ բաժանորդաց » . 4 »
Բ. անգամին . . . 3 »
Գ. անգամին . . . 2 »
Մասնաւորի շահու վերաբերած նամակ կամ յօդուած երբ [illegible] առաջ տողին 6 ղրուշ. ոչ բաժանորդաց 8;
Անվճար նամակ չ'ընդունուիր;
Անստորագիր նամակ կամ յօդուած երբ չ'ընդունուած կ'սեպուի:
Ձեռագիրները ստացուին թէ ոչ ետ չեն տրուիր;

ԿԱՐԾԻՔ ԻՐԱՒՈՒՆՔԻ

ՀՐԱՀԱՆԳԻՉ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ

ԱՌԱՋԱՐԿՈՒԹԻՒՆ

Ազգերնուս ներքին վիճակը բարեկարգելու համար կեդրոն բան մ'ընել.

Այո, և այս չէ թէ դանդաղելով, չէ թէ բողոքելով, չէ թէ զարման չյայտնող պժգոհութիւններով և այս տեսակ գրութիւններով, հապա ժողովուրդը հրահանգելով, միտքերը լուսաւորելով, սիրտերը գրաւելով և միացնելով և այս նպատակին համար անընդհատ գործելով:

Տարածուած ազգ մը՝ ինչպէս է Հայոց ազգը, նաեւ՝ համրջնոց ըսել, ներքնապէս ալ կառավարուած ազգ մը՝ ինչպէս է մեր ազգը, ուսումնականներու և առողջամտաւոր ազգայնոց աջակցութեան անհրաժեշտ պէտք ունի, այս աջակցութիւնը մեր առաջարկելիք միջոցով այնչափ դիւրին պիտի ըլլայ՝ որ անզգալի խնջէնքէ մ'եւս զգալի արդիւնք մը պիտի արտադրէ, և ինչ որ մեր ազգի վիճակին մէջ տարիները հազիւ կարող պիտ'ըլլան ներգործել՝ ամենը շատ դիւրաւ և հաստատ կերպիւ պիտի ազդուէին ամեն մէկու մտքի և սրտի վրայ, բաւական է որ գործելու կամք և անկեղծ սիրտ մը նաեւ փոքր ունենանք յառաջադիմելու։ Քանի որ տէրութեանց պատերազմական վէճերէ և քաղաքական հոգերէ և գրգռումներէ ազատ է մեր ազգը՝ ինչու համար ժամանակ չունենայ իր ներքին յառաջադիմութեան և բարեկարգութեան զբաղիլ և հիմնաւոր ձեռնարկ մը յառաջ տանիլ։ Մեզմէ պակասը ոչ տաղ է և ոչ պաշտպանութիւն, այլ և ոչ մէկն է արգելք մեր յառաջադիմութեան. վիճակ մը բարելաւելու ոչ կամք կ'յայտնենք և ոչ միջոց մը կ'գտնենք, և այս երկուքը բաւական են ազգերնուս վիճակը սեղմել և զանի նեղութեան և անբարեկարգութեան ենթարկել, հետեւաբար Հայուն յառաջադիմութեան արգելք՝ Հայը եղած է առանց դուրսէն թշնամի մ'ունենալու։ Չ'կայ միջոց մը ազգերնուս մէջ մտքերը լուսաւորելու, գաղափարները յղկելու, ուսումը և գիտութիւնը աւելի զգալի կերպիւ տարածելու, սիրտերը միացնելու և յառաջադիմութեան ուղին բաց և ուբահետ ընելու. մենք կ'առաջարկենք և ամեն ազգայնոց ուշադրութեան և խորհրդածութեան կ'յանձնենք:

Ընկերութիւն մը կազմել Հրահանգիչ Ընկերութիւն անուամբ (կամ ուրիշ որ և է յարմարագոյն անուն մը), որու կեդրոնը ըլլայ Զմիւռնիա և Ճիւղեր ունենայ ամեն Հայաբնակ երկիրներ։ Այս ընկերութեան նպատակը ըլլայ,

Ա. Խօսարան մ'ունենալ ամեն տեղ ուր Ճիւղեր ունենայ, և այս խօսարաններու մէջ առանց կրօնական և քաղաքական վէճերու յարելու՝ ուրիշ որ և է հրահանգիչ և կրթական նիւթերու վրայ ատենաբանութիւններ ըլլան 'ի ներկայութեան ունկնդրաց, կին կամ էրիկ մարդ անխտիր ընդունելով անվճար։

Բ. Այս ատենաբանութիւնները ամեն տեղ գտնուած խօսարաններու հաղորդուին և փոխանակուին, և որմէ վերջը հրատարակուին օրագրաց միջոցաւ.

Գ. Ամեն Հայաբնակ երկիրներու ուսումնականները և առողջամտաւորները սոյն ընկերութեան խորհրդական անդամներ ըլլան ընտրութեամբ:

Դ. Ընկերութիւնը ուսումնականները քաջալերէ, հեղինակները կամ թարգմանիչները վարձատրէ, անոնց աշխատութիւնները ծախու առնու կամ տպէ ընտրութեամբ և ծախու հանէ դիւրագին:

Ե. Ընկերութիւնը դասագիրք պատրաստէ և մատակարարէ ամեն դպրոցներու համար դիւրագին. այս դասագիրքերը խորհրդական անդամներէ քննուած, որոշուած, նոյնպէս և մինչև հիմա եղածներէ յարմարագոյն և օգտակարագոյն ճանչուած ըլլան:

Զ. Ամեն Հայ դպրոցներ պարտաւոր ըլլան այս դասագիրքերը գործածել, նոյնպէս և ընկերութիւնը պարտաւոր ըլլայ բոլոր աղքատ աշակերտաց ձրի մատակարարել:

Է. Ընկերութիւնը իր գլխաւոր նպատակներէ մին սեպէ աշխարհաբառ լեզուն յղկել, կանոնել, ճոխացնել և կոկել, և հոգ տանիլ բոլոր հրատարակութեանց կանոնաւոր և մաքուր ոճ բանեցնելուն։

Ը. Ընկերութիւնը հոգ տանի աշխարհաբառ ճոխ բառարան մը շինել, նոյնպէս Գաղղիարէն և Անգղիարէն լեզուներու, Հայերէնով մէկտեղ, հարուստ, ընտիր և կատարեալ բառարաններ հրատարակել.

Թ. Ընկերութեան նպատակներուն մէջ ըլլայ կիսամսեայ կամ միամսեայ հանդէս մը հրատարակել մասնաւորապար դպրոցաց համար, այս հանդէսը տեսակ մը դասագիրք սեպուի և աշակերտք պարտաւոր ըլլան կարդալ և հրահանգուիլ:

Ժ. Ընկերութիւնը դպրոցաց համար միօրինակ, դիւրին և աշակերտաց դիւրըմբռնելի մեթօտ մը պատրաստէ, և բոլոր այս տեսակ աշխատութիւնները ծախու առնու, երբ յարմար գտնուին, և հեղինակները քաջալերէ և վարձատրէ.

ԺԱ. Ընկերութեան նպատակներուն մէջ ըլլայ տպարան նոյնպէս և Ճեմարան մը հաստատել 'ի վերջոյ:

Սակայն այս նպատակաւ ընկերութիւն մը կազմելու համար անտարակոյս մեծկակ դրամագլուխ մը անհրաժեշտ պէտք կայ, այս դրամագլուխը ասկէ պիտի գոյանայ։ Ուստի առանց մէկէն 'ի մէկ վերը յիշուած նպատակները գործադրելու մտադրութեան՝ աւելի օրինաւոր և օգտակար կ'ըլլայ նախ խօսարանը հաստատել և ատենաբանութեան ասպարէզը բանալով ժողովուրդը հրահանգել և ընկերութեան վրայ նպաստաւոր գաղափար մը տալ, մինչև դրամագլուխ մը մատակարարուիլը և գոյանալը. որու համար հետեւեալ միջոցը կ'առաջարկենք:

Ա. Ամեն Հայ՝ ընկերութեան անդամ սեպուին և վճարեն տարին միայն հինգ ղահեկան, կամ մէկ և վերջին անգամուն համար մէկ Օսմանեան լիրա: Անտարակոյս կամաւ եղած նուէրները շնորհակալութեամբ կ'ընդունուին և կ'արձանագրուին:

Բ. Սոյն անդամները արտօնութիւն ունենան խորհրդական անդամները իրենց երկիրներու մէջ իրենք ընտրել քուէիւ, և տարին անգամ մը ընկերութեան գործոց հաշիւը պահանջել:

Գ. Ընկերութեան հրատարակած ամեն գիրքերը արտօնութիւն ունենան ասոնք եղած գնով ծախու առնել միայն հարկին տասն շահ թողլով ընկերութեան գանձուն.

Դ. Ընկերութեան գանձապետը իրենք ընտրել որ պարտաւոր ըլլայ կանոնաւորութեանց և ժողովոյ որոշմանց հպատակիլ.

Սոյն ընկերութեան նպատակները մեծագոյն մասամբ նշանակելէս և բանալիք ընթացքը բացատրելէս ետքը, անկէ արտադրելիք արդեանց վրայ խօսիլ աւելորդ կ'սեպեմ քանի որ գործը ինքնին կ'յայտնէ. Կեդրոնական ժողովոյ համար ընդհանուր կանոնադրութիւն մը նոյնպէս և միօրինակ ներքին կանոնադրութիւն մը կրնան պատրաստել վերը յիշուած սկզբանց վրայ, և թերևս աւելի օգտակար և հաստատ կ'ըլլայ սոյն ընկերութիւնը ընդհանուր ազգին և կառավարութեան պաշտպանութեան տակ դնել:

Ուստի այսպիսի առաջարկութիւն մը բոլոր ուսումնական և ուսումնասէր ազգայնոց ուշադրութեան և խորհրդածութեան յանձնելով՝ մեր արգոյ Պաշտօնակիցներու աջակցութիւնը կ'խնդրեմ իրենց պատուական թերթերու միջոցաւ ծանօթացնել զայն ազգիս լրութեան և ըստ այնմ օգնել մեզ այսպիսի ազգօգուտ և յառաջադիմութեան մեծապէս նպաստող ընկերութեան մը կազմուելուն և հաստատուելուն, որոյ ազգերնիս զգալի պէտք մ'ունի ամեն պարագաներու համար:

ՀԵՌԱԳՐԱԿԱՆՔ

Լիզպօն, 9 Մայիս. Զինուորական ապստամբութիւն մը յարուցանելու համար եղած ջանքերը 'ի դերև ելան.

Լօնտրա, 9 Մայիս. Իրլանտայի մէջ գործերու վիճակը օր ըստ օրէ աւելի ծանր կերպարանք մը կ'առնու և հասարակաց ուշադրութիւնը վերջին աստիճան կ'գրաւէ։ Հաւանականաբար Քօրքի քաղաքապետը պաշտօնէ պիտ'իյնայ.

Մատրիտ, 9 Մայիս. Երեկ ազգային ժողովոյ մէջ կառավարութիւնը հարցումի մը պատասխանելով յայտնեց թէ Ճիպրալդարի յանձնուելու նկատմամբ եղած խնդրոյն կարեւորութեան անտարբեր մնացած չէ: Սակայն այս գլխաւոր բանակցութիւններ սկսելէ առաջ հարկ է որ Սպանիա զօրաւորապէս կազմուելով մեծ տէրութեանց կարգը մտնէ։

Բարիզ, 9 Մայիս. Ուէյլսի Իշխանը և Իշխանուհին Բարիզ հասան։ Ելիսեան պալատին մէջ զինուորական հանդէս մը տեղի ունեցաւ 'ի պատիւ Նորին Բարձրութեանց: Ուէյլսի Իշխանը Կայսեր քով կ'գտնուէր ուր ներկայ էր նաև Լուի արքիդուքս.

Պ. լը Վալէթի բացակայ ըլլալուն պատճառաւ, որ հրաման առած է քանի մ'օրուան համար իր գետինները երթալու, արտաքին գործոց պաշտօնատան գործերը Պ. Րուէ պիտի տեսնէ փոխանորդաբար:

— Իրլանտա, Քօրք, 10 Մայիս. Պ. Սալիվան քաղաքապետը իր պաշտօնը կատարելու անկարող ըլլալը յայտնող կառավարութեան հիմնագրին դէմ ժողովրդային ցոյց մը տեղի ունեցաւ հոս այսօր:

— Անգղիոյ ազգային դրամատունը $4^1/_2\ ^0/_0$ բարձրացաւ.

Քօրքի քաղաքապետ Պ. Սալիվանի վրայ կառավարութեան զայրոյթը և զանի պաշտօնէն հրաժարեցնելու փափաքը կատարելապէս կ'արդարանան հետեւեալ ատենաբանութենէն մէջ զոր Քօրքի քաղաքապետը արտասանեց ազատեալ Ֆէնիաններուն համար տրուած սեղանին վրայ. —

«Չ'ըսաւ թէ Ֆէնիանութեան կամ Քլէրքընվէլի բանտին տակ զետեղուած վառօդի տակառին գործն էր այս, սակայն հաւատաց որ իր հայրենակցաց համար արդարութեան հանդիսաւոր գործ մ'ըրաւ — քահանայապետի մը կողմէ գործադրուածի պէս հանդիսաւոր — երբ ըսաւ այն ազնիւ մարդոց. Ալէն, Լարքին և օ'Պրիէն որոնք իրենց հայրենեաց համար կեանքերնին զոհեցին՝ եթէ բարի քաթօլիքներ և բարի հայրենասէր պէտք են յիշուիլ և յարգուիլ (կայթիւններ). Սոյն վայրկենին երկրին մէջ Անգղիոյ երէցասարդ իշխան մը կար.

«Ձայն մը. — Թող —

«Ուրիշ ձայն մը. — Ո՛չ. գալուստը բարի ըլլայ:

«Քաղաքապետը շարունակեց թէ երբ այն ազնիւ Իրլանտացին, օ'Ֆարէլ, Աւստրալիայի մէջ Իշխանին վրայ կրակ բրաւ՝ մի և նոյն հայրենասիրական և ազնիւ զգացումներով համակեալ էր ինչպէս էին Ալէն, Լարքին և օ'Պրիէն (կայթիւններ և ձայներ. 'սուտ է'). Իրլանտայի համար կեանքերնին զոհողներու այսպէս և օ'Ֆարէլի վրայ մեծ համարում մը պէտք է ստացուի (կեցցէներու ձայներ). Ամեն մարդ տեսաւ թէ ինչպէս ազնիւ Բոլոնիացի մը Ռուսիոյ Կայսեր վրայ կրակ բրաւ կարծելով թէ Կայսրը ժողովրդեան ազատութիւնները ոտնակոխ կ'ընէր (կայթիւնք)։ Ուստի օ'Ֆարէլ իսկ, հաւանականաբար, մի և նոյն ազնիւ զգացումները ունեցաւ Իշխանին վրայ կրակ ըրած ատեն. Օ'Ֆարէլ Բոլոնիացւոյն պէս ազնիւ Իրլանտացի մը և ճշմարիտ հայրենասէր մ'էր, վասն զի երկուքն ալ մի և նոյն զգացումը ունէին ըսել ինչ որ ըրին (կայթիւնք)».

— Սպանիոյ ազգային ժողովը խիստ մեծագոյն մասամբ նոր սահմանադրութեան կրօնական ազատութեան նկատմամբ յօդուածները ընդունեց.

Պարսելօնայի մէջ Քարլիստներու դաւադրութիւն մը յայտնուեցաւ: Երեսուն հոգի, որոց մէջ կային բանակի քանի մը պաշտօնակալներ, ձերբակալ եղան:

— Պօմպէ, 6 Մայիս. Ենդիկի (չիվիտ) հունձքը դէշ վիճակի մէջ կ'գտնուի անձրև չգալուն պատճառաւ, որուն պէտքը ամեն տեղ սաստիկ կ'զգացուի:

— Օգոստափառ Սուլթանին այս տարուան ըրած ատենաբանութիւնը նշանակութեան արժանի է ինչպէս էր անցեալ տարուանը, որու ամբողջ թարգմանութիւնը լրագրիս այս թուոյն մէջ զետեղելու միջոց չըլլալուն՝ կ'ստիպուինք գալ շաբաթուան թուով խոստանալ անոր հրատարակումը:

— Հասարակաց շինութեանց պաշտօնեայ Վսեմ. Տաւութ փաշան անցեալ չորեքշաբթի Օգոստափառ Սուլթանին ներկայանալու պատիւ ունեցաւ.

Կայսրը խիստ սիրալիր ընդունելութիւն մ'ընելով Նորին Վսեմութեան՝ իր ձեռնարկած գործերու վրայ մէկ ժամէն աւելի մանրամասն խօսակցութիւն մ'ըրաւ անոր հետ, և տուած բացատրութեանց վրայ իւր բարձր գոհունակութիւնը յայտնեց:

Նորին Վսեմութիւնը անցեալ երկուշաբթի օր Մեծ-Եպարքոսին ատենը Ճաշեց, և իր Եւրոպա կատարած պաշտօնին վրայ տեղեկութիւններ տուաւ ։

ՄԱՀ ՎՍԵՄԱՇՈՒՔ ՎԱՌՕԴԱՊԵՏ ՅՈՎՀԱՆՆԷՍ ՊԷՅԻ ՏԱՏԵԱՆ

Աղէկ վատնուած օրերու վրայ մահը սոսկում չպատճառեր ինչ որ կ'ազդէ խիղճը անհանգիստ մէկու մը: Մահը արտաքին մարդը միայն կ'մեռցնէ, վայրկենական կափում մը կու տայ անոր աչաց և նոր կեանք անոր հոգւոյն: Եղուկ անոր որ բաղդաւորս կ'մեռնի դեռ աչերը բաց և դեռ աշխարհի վրայ շնչած ժամանակ! եղուկ անոր որ դեռ չմեռած մեռած է և մահը չտեսած սոսկումը սրտին մէջ կը մտցունէ! Այնպիսին դեռ չմեռած՝ միշտ գերեզմանի մը մէջ կ'ապրի, և այս գերեզմանը իւր մարմինն է: Ինչպէս որ ամեն փայլած բանը ոսկի չէ, այսպէս և ամեն շարժողը կամ խօսողը մարդ չէ. քանի դժուար է մարդ ըլլալ, և որչափ հաղուագիւտ է մարդ գտնել! Բնութիւնը արտաքին շպար մը կ'անցնէ ներքին մարդուն վրայ, և միայն այս արտաքին շպարին է, իբր բնութենէ շինուած, որ մահը կ'զօրէ մօտիլ, եղծել և հող ընել, սակայն ներքին մարդը անմատչելի է և անմահ: Քանիներ կան որ արտաքինէն կ'խաբուին նոյն իսկ այն ատեն որ ներքինը վնասուած է, վնասուած՝ չէ թէ ուրիշէ մը, չէ թէ թշնամիէ մը, հապա իր շպարէն հապա արտաքին մարդէն։ Ներքին մարդուն ոչ ոք կրնայ վնասել բաց 'իրմէ, ոչ ոք կրնայ եղծել կամ ապականել եթէ ոչ իր շպարը այսինքն արտաքին մարդը։ . . . .

Եւ Յովհաննէս պէյ կատարեալ մարդ մ'էր, կատարեալ հայր մը և կատարեալ ազգասէր մը, մերկացաւ իր վրայէ արտաքին շպարը և իբր ներքին մարդ կ'ապրի նա մարդկութեան մէջ, իր ընտանեաց մէջ, իր ազգին մէջ, որոց երեքին համար բարերար, երախտաւոր և օգտակար հանգստացաւ, և երեքն ալ անոր մեռութենէ յաւիտենապէս կը զրկուին միայն անոր յիշատակաւ մխիթարուելու համար։ Ազգասէր կարեկիր և ողորմած պաշտօնեայ մը կորոյս, ընտանիքը առաքինութեան կենդանի պատկեր մը և ազգը [illegible], պատուական և օգտակար անդամ մը: Հանգուցելոյն բարեմասնութեանց մէջ իսկ ակնատես վկայ ըլլալու պատիւը ունեցած ըլլալով, անոր վսեմ և ընտիր յատկութեանց տեղեակ, քանի՛ քանի՛ անգամ զմայլած չենք անոր հեզահամբոյր, աղքատասէր բնաւորութեան, անոր ուսումնասիրութեան, ազգասիրութեան, տաղանդոյն և առաքինութեանց; և իր վրայ սրտալին յարգանք մը, զմայլում մը կը գրաւէր այս յատկութիւններով ամեն անգամ որ իրեն հետ խօսելու բաղդաւորութիւնը ունենայինք։

Յովհաննէս պէյ վառօդագործութիւնը իր կատարելութեան հասցնելով Տաճկաստանի մէջ՝ կառավարութիւնը վառօդապետութեան բարձր պաշտօնը իրեն և իր ընտանիքին յանձնեց։ Երբ Սուլթաններու, այսինքն Սուլթան Մահմուտի, Սուլթան Մէճիտի և Սուլթան Ազիզի հաւատարմութեամբ, աչալրջութեամբ և տաղանդով ծառայած անոնց երեքին ալ համակրութիւնը և սէրը ստանալու կարող եղած էր: Սուլթան Մահմուտն առանձին սէր և համակրանք մ'ունէր իր վրայ՝ որ պատահած է շատ անգամ որ գիշերները երբ քունը փախչէր՝ իր հաւատարիմ վառօդապետը իր անկողնոյն մօտ բերել տուած է անոր հետ խօսելու համար։ Դեռ շոգենաւերը չհնարուած ատեններ ճամբորդութեամբ մը Եւրոպա գացած և վառօդագործութիւնը աւելի կատարելագործելով նոյնպէս Տաճկաստանի զարգացման նպաստաւոր ձեռնարկութեանց գրաւած էր, զորս իր վերադարձին յաջողցուցած էր քանի մը գործարաններ շինելով, ինչպէս է երկաթի, չուխայի, ֆէսի և այլն, թէև չըկրցան յառաջերթալ 'ի մեծ ցաւ իր անխոնջ սրտին, և գրեթէ երկար ատեն այս գործարաններու ճակատը իր ամենէ սրտամաշ զբաղմունքէ և մտածմունքէ մին եղած էր: Իր զաւակաց ընտիր կրթութիւն մը տուած՝ անոնց բարձր պաշտօններու մէջ իր սերմանածին արդիւնքը տեսած էր: Անոնց մէջէ Ներսէս Էֆէնտին մասնաւորաբար Անգլիա ղրկելով կռանը ձեռքը մեքենագործութիւն սովրեցնել տուած էր քրտնաջան աշխատութեամբ, որպէս զի իր ազգութեան երեւելի արհեստաւոր մ'ընծայէ և իր ձեռնարկութիւնները պսակէ։ Ներսէս Էֆէնտի 'ի դերև չհանեց իր հօր աշխատութիւնները և ակնկալութիւնը, և մեքենագործութիւնը նոյնպէս և Անգլիարէն լեզուն լաւ սորված Պօլիս վերադառնալով երկաթի գործարանին կառավարութիւնը իր վրայ առաւ, և քանի մը պարագաներու մէջ իր ունեցած հմտութիւնը և յաջողակութիւնը յայտնեց:

Յովհաննէս պէյ զարդ այն երեւելի անձերէն էր՝ որոնք իրենց նշանաւոր ըրած են Օսմանեան կառավարութեան և ազգերնուս յառաջդիմութիւնը և բարեբաստութիւնը: Մխիթարեան Միաբանութեան քանի քանի անգամ դրամական և ուրիշ օգնութիւններ և նուէրներ ըրած է ազգերնուս մէջ ուսումնական, կրթական և օգտակար գրքերու տարածուելուն համար։ Դպրոցներու յառաջադիմութեան և զարգացման մասնաւոր փափաք մ'ունենալով աշխարհացոյց տախտակները և ուրիշ աշխատութիւններ իր մասնաւոր ծախսովը տպել տուած էր։

Յովհաննէս պէյ ազգերնուս մէջ ժամանակ առ ժամանակ ծագած երեւելի անձերու պատմութեան և կենսագրութեան մէջ նշանաւոր անուն մ'ունի, անուն մը՝ զոր իր կենդանութեան միջոցին կարող եղաւ անարատ և մաքուր պահել և զոր պատմութիւնը կրնայ խղճի մտօք փառաւորել: Յիշատակն արդարոց օրհնութեամբ եղիցի:

Հանգուցեալը 71 տարեկան էր և որդի վառօդապետ մահտեսի Առաքել Տատ ամիրայի, միջակ հասակ մ'ունէր և նիհար կազմուածք մը, երեսին վրայ այրածներ կ'նշմարուէին որոնք բնականաբար իր վտանգաւոր արհեստին արդիւնքներն էին. Յովհաննէս պէյ քանի մ'անգամ հազիւ կարող եղած էր մահուանէ ազատիլ վառօդը գործուելու ժամանակ բռնկած ըլլալով, և այս վտանգներէ պատճառուած երկիւղը իր ճակտին վրայ վէրք մը գոյացուցած էր որ երբեմն երբեմն կ'բացուէր և որ վերջապէս իր մահաբեր հիւանդութեան նպաստեց։ Ինչպէս բնաւորութիւնը նոյնպէս և կերպարանքը հեզ էր և խոնարհ. փարթամութիւնը և մեծապարծութիւնը սրտանց ատելով խոնարհ ընթացք մ'ունէր և համեստ կեանք մը. իր տեսքը յարգանք միանգամայն և պատկառանք կ'ընծայէր և ամեն մօտեցողի վստահութիւն կու տար համարձակ սիրտը բանալու։ Սերտ բարեկամութիւն մ'ունէր Փէլիսիէ մարաջախտին հետ, և կարծեմ, եթէ չեմ սխալիր, անոր հօրմէն առած էր վառօդաշինութիւնը:

Եւ միթէ մեծ մխիթարութիւն մը չէ կարող ըլլալ այսպիսի դամբանական մ'ընել այն օրինակ անձի մը վրայ զոր այսօր ազգերնիս կ'ողբայ. անձ մը՝ որ կենդանի պիտի մնայ միշտ ազգին մէջ, պատմութեան մէջ, իր քաղցր յիշատակին և իր ընտիր ու հօրանման զաւակաց մէջ, վասն զի Հանգուցեալը այնպիսի շառաւիղներ թողուց իր ետին՝ որոնք կարող են և են փառաւորել այս անունը և մոռցնել տալ ազգերնուս այսօրուան զգացած վիշտը:

Վառօդարանի բոլոր վերատեսչութիւնը և կառավարութիւնը երկար ատենէ 'ի վեր յանձնուած է Գրիգոր Էֆէնտի Տատեան իւր ազնիւ և քաղցրաբարոյ որդւոյն։

Յօդուածնիս կ'վերջացնենք Հանգուցելոյն յուղարկաւորութեան պարագաները Մասիսէն փոխ առնելով:

Յուղարկաւորութիւնը երկուշաբթի օրը (Զատկի մեռելոցին) կատարուեցաւ Պէշիկթաշի եկեղեցւոյն իր աստիճանին և համբաւոյն արժանի փառաւորութեամբ, որուն ներկայ էին ազգիս բոլոր բարձրաստիճան եկեղեցականներն ու աշխարհականները, տէրութեան մեծամեծ պաշտօնատարներ և բազմաթիւ երեւելի օտարազգիներ։

Կայսերական կառավարութիւնն ալ իր բազմամեայ հաւատարիմ պաշտօնատարին յիշատակը մեծարելով երկու հարիւրի չափ Խասայի զօրք ղրկած էր, նոյնպէս և Բ. Դռնէն, Թօփհանէէն և Զինուորութեան դռնէն բազմաթիւ գլխաւորներ ու պաշտօնակալներ, որք յուղարկաւորութեան հանդէսին շուքն աւելցուցին 'ի պատիւ մեծանուն Հանգուցելոյն և Ազգին։

Դամբանականը Գեր. Խորէն եպիսկոպոս խօսեցաւ, մանրամասնաբար յիշելով Հանգուցելոյն առանձնական և հասարակական կենաց բոլոր առաքինութիւնները, տէրութեան մատուցած անձնուէր ծառայութիւնները, ազգասիրական և ուսումնասիրական բարերարութիւնները, խոնարհ քաղցր և ազնուական կենցաղավարութիւնը, աղքատասիրութիւնը, բարեպաշտութիւնը, հեզութիւնը, խոհականութիւնը և ուրիշ այլ և այլ բարեմասնութիւնները, որովք Հանգուցեալն ամենուն սէրն ու համարումը գրաւած էր։

Ժամը եօթնին եկեղեցական արարողութիւնները աւարտելով, Հանգուցելոյն մարմինը Պէշիկթաշի եկեղեցիէն հանեցաւ և մեծ հանդիսիւ Պէշիկթաշի նաւամատոյցէն շոգենաւ դրուելով Մաքրի գիւղ տարուեցաւ, ուր դարձեալ վաշտ մը կայսերական զօրաց ուղեկցութեամբ և նոյն հանդիսիւ խուրաշէն եկեղեցին տարուելով, հոն պատրաստուած շիրմին մէջ ամփոփուեցաւ։

Բէրայի քաղաքային ժողովոյ նախագահ և Բարձր Մեծ-Եպարքոսին փեսայ Վսեմ. Սալահատին պէյը անցեալ երկուշաբթի իւր մահկանացուն կնքեց կուրծքի հիւանդութեամբ, որու ենթարկուած էր երկար ատենէ 'ի վեր: Հանգուցեալը կառավարութեան նշանաւոր պաշտօնեայ մը ըլլալով փառաւոր և գեղեցիկ ապագայ մ'անշուշտ էր իրեն համար եթէ իր օրերը երկար ըլլային անցաւոր աշխարհիս վրայ: Բէրայի վերջին արհեստահանդիսին մէջ Կայսերական կառավարութեան ներկայացուցիչը ըլլալով իր պաշտօնին մէջ նշանաւոր և խիստ յաջող հանդիսացաւ աջակցութեամբ Ճարտարապետ Գալուստ Էֆէնտիի Մարկոսեան, այժմ Վսեմ. Տահիր փաշայի յարած, և մասնաւոր տետրակ մը հրատարակեց նոյն առթիւ որ Տաճկաստանի մէջ վաճառականութեան և հնարագիտութեան վիճակին վրայ մանրամասն և գեղեցիկ գրուած տեղեկագիր մ'է: Սալահատին պէյ շատ աղէկ կրթուած և ընտիր հրահանգութիւն մը ստացած անձ մ'ըլլալով իր մահը մեծ կորուստ մը կրնայ համարուիլ պաշտօնէութեան:

— Պատրիարքարանէն հետեւեալ պաշտօնական հեռագրերը հրատարակութեան հաղորդուած են.

285 մարթ 9 թարիխլի իլէ մաքամը Ճէլիլի Սատարէթ իւզմայէ խիթապէն Էրզրում վիլայէթինտէն մէվրուտ թէլէղրաֆնամէ սուրէթի տիր։

Մուշտէ քեալին Գըրըլ քիլիսասէն մէսրուքէ էշեանըն զաբթը իխրաճը զըմնընտա իթթիխազ վէ թէշէպպիւս օլունան թէտապիր վէ էսպապ քէյֆիյէթի արզ օլունմուշ. պու սըրատէ մահալլի իլէ միւթէվալլիսի մալումաթ վէ թալիմաթ ալընմագ վէ բիլմէքսիզին պուլունմուշ իսէ. միւճէրրէթ զավալլի փատիշահի վէ խանէի թէվէճճիւհսաթը ալի խըտիվիլերի իլէ էշեայի մէսրուքէ մէյանընտա պուլունան խաչ իլէ վէ սաիր պազը էշեա զահիր չըգարըլըպ պազը յէսիմին սաթըլտըղը խաբէրի մէվէտի զավի տուրուլմուշ. վէ պու քէյֆիյէթ ահալիյի Խըրիսթիանըն թաթմինի հալէթլերինի մուճիպ օլտուղու միւլահազա, սիլլէթլիֆիդհի Թասլը' հալըլի մէրքումէ խըլահզաթը մամլուքեսինին սիրռաթ խըթիհսալինէ ֆէվք իլ ատէ իթինա խըլընմըշ տըր. ֆէրման։

285 մարթ 29 թարիխլի իլէ մաքամը Ճէլիլի Սատարէթ իւզմայէ խիթապէն Էրզրում վիլայէթինտէն մէվրուտ թէլէղրաֆնամէ սուրէթի տիր։

Մուշտէքի քիլիսասէն մէշրուգ էշեասէն պիր միգտարը Խըզան գազասընտա թաալի Գուլփիք գարիյէսինտէ մէյտանա չըգըլըն էլ խըթինթաալ անլաշըլմըշ, կէչէնտէ մէմուրի մախսուս կէօնտէրիլմիշ իտի. անսըթէարիխ թէլէգրաֆի սալիշէրի իլէ էշեայի մէզգիւրէտէն տօգուզ իւչ ատէտ Խաչ վէ գանտիլ վէ սաիրէգի թանխմինէն իկիպին գըրգտար ակչէյի սիրկիրի չըգարըլըպ ոմը քէրրէ սըթէլէգրաֆ սիպարիլմիշ. վէ սաիրլերինին տախի թահարրի վէ թէշէսսիւլմէքի էյլէմէքտէ մուզաֆֆէրէթ խըսալըթ խըլերը Տիյարպէքիր վիլայէթինէ եազըլմըշ օլմագլա. մաէթ թէչէքքիւր արզի քէյֆիյէթէ ճիւրէաթ օլունուր. ֆէրման։

— [illegible] 285 նիսան 4 թարիխլի իլէ Էրզրում վիլայէթինտէն վարիտ օլան թէլէղրաֆնամէնին խուլասասը դր։

Մուշտէ քեային Գըրըլ քիլիսէ էշեայի մէսրուգայի նէն սուրուք թաալի Գուլփիք գարիյէսինտէ պու քէրրէ սալիք սէքիզ ատէտ շուրճա անիլան էլվահէի մաղսուսէ իլէ իշ ատէտ կէօնիւմիւշ վէ գօշում վէ պուրմա վէ պիր ատէտ փիլան վէ եէտի ատէտ մասանթըր կէօրնէքլի վէ պիր չիֆթ փասլը գաւխիրէ չըգարըլըրը մահալլի մէզգիւրէ կէօնտէրիլան մէմուրէն ալընան թէլէգրաֆ մէալինտէն անլաշըլմըշ օլմագլա պէյանի հալէ խըթիմար գըլընտը։

— Մինչեւ աչքերնուս արցունքը հազիւ դադրած էր Մշոյ և Զարմանճայի սխուր անցքերուն նկատմամբ, և ահա Վասպուրականէն աղիողորմ կականաց նոր գուժկան մը կը հասնի:

Այն երկիրը, որուն բազմամարդութեանը 'ի կշիռ չէին գար Հայաստանի միւս գաւառները, այսօր իր աղէտներովն ալ քան զամէնը կը գերազանցէ:

Ոչ հասակ՝ ոչ սեռ՝ և ոչ ալ կէս մարդկային նկատմունք աւերասէր Շէյխերուն արիւնախանձ ձեռքերը չեն կասեցներ։

Հասարակաց կարգին ընթացք և բնութեան սրբանուիրելի օրինացն անպատկառ՝ այս մոլեգին վրանաբնակները մերթ այսր և մերթ անդր աւեր և մահ կը սփռեն, հաւասարապէս արհամարհելով Տէրութեան պատժահասող բազուկը և իրենց բազմայուզած որբերուն և այրիներուն սրտառուչ հեծեծանքը։

Քրդայ օրէնքը նոյն իսկ անօրէնութիւնն է. և կրօնքը՝ հարստահարութիւն:

Իսկ անոնց արգասիքը միշտ մեր ազգին բաժինն է:

Այսպիսի ոճիրները լսելը արդարև մեծազօր Տէրութեան արդարադատ գթասիրութիւնները չճանաչել կ'ըլլայ:

Վէրքը գոցելով բոյժ չգտներ։

Ժամ է արդ որ Խառն Ժողովը՝ Մուշի և Զարմանճայի խնդրոյ պէս այս կենսական խնդրոյն համար ալ կայսերական բարեխնամ Կառավարութեան անմիջական անօրինութիւնն հայցելով՝ Վասպուրականի թշուառ ժողովրդոց ապերանութիւնն երանութեան փոխել, և բարբարոս ձեռքերուն արժանաւոր հատուցում մը ընել տայ։ ՄԱՄՈՒԼ

— Պօլսոյ Թօփղափուի աղջկանց նախակրթաց վարժարանին արգոյ Հոգաբարձութիւնը շինութեան ծախուց հաշիւը և նուիրատուաց անունները հրատարակելուն առթիւ հետեւեալ տեղեկութիւնները կու տայ.

ՇԻՆՈՒԹԻՒՆՔ. Դպրոցս կառուցուած է Թօփղափուի սուրբ Նիկողայոս եկեղեցւոյ դիմացը՝ բոլորտիքը որմ քաշուած 240 կանգուն գետնի մը վրայ, որուն ամբողջ տարածութիւնը 320 կանգուն է։

Դպրոցիս կառուցման ծախուցն համար՝ վերոյիշեալ եկեղեցւոյ սնտուկէն ոչ սակ ընդունուած է, ոչ ալ նոյնին վրայ սպառ թողուած ․ այլ միայն դպրոցի դրամն առջևի օժտին համար եկեղեցիէն երեք քար առնուած է, որոնք եկեղեցւոյ համար անգործածելի էին ։

Դպրոցը՝ 1868 մայիս 12ին բացուած է թաղիս աղջկանց դաստիարակութեանն համար, ուր այժմ 75 աշակերտուհի Հայերէն ընթերցանութեան և ձեռագործութեան կը պարապին ։

Դպրոցս իրեն ո և իցէ սեփհական դրամը կամ կալուածքէ զուրկ ըլլալով Հոգաբարձութիւնս պարտաւոր գտած է դպրոցը յարատև շարքի մէջ դնելու, և նորին պիտոյքներն հայթայթելու համար բարեսէր ազգայնոց օժանդակութեանը դիմել՝ տարեկան 25ական ղուրուշոց ստանալիներու միջոցաւ հանգանակութիւն մը բանալով ։ Ուստի ամեն այն արգոյ ազգայինք՝ որոնք ճանչցած են իգական սեռի դաստիարակութեան ամենամեծ կարևորութիւնը, կը հրաւիրուին մասնակցիլ այս բարենպատակ նուիրատուութեան՝ ստորագրութեամբ լոկ մէկ կամ աւելի բաժիններու ։ Այն հանգանակութեան մասնակից եղող արգոյ ազգայնոց անունները և իրենց նուէրները քիչ ժամանակուան մէջ լրագրի միջոցաւ պիտի հրատարակուին ։

Դպրոցիս արդի Հոգաբարձուներն են՝ Քրիստոստուր Նիշաստաճեան, մահտեսի Քրիստոստուր Ունճեան, Խաչատուր Գազարոսեան, Մկրտիչ Նիշաստաճեան, Ենովք Փուլճեան, Յարութիւն Ջիլճեան, Գաբրիէլ մահտեսի Նշանեան, մահտեսի Յակոբ Լութֆիեան ։

10 Ապրիլ 1869, Թօփգափու ․

Ի ԴԻՄԱՑ ՀՈԳԱԲԱՐՁՈՒԹԵԱՆ ԴԱՆՁԱՊԵՏ
ՔՐԻՍՏՈՍՏՈՒՐ ՆԻՇԱՍՏԱՃԵԱՆ ԽԱՉԱՏՈՒՐ ԳԱԶԱՐՈՍԵԱՆ
Մ. ՔՐԻՍՏՈՍՏՈՒՐ ՈՒՆՃԵԱՆ

◆

ՎԱՍՊՈՒՐԱԿԱՆԻ ԵՒ ՇՐՋԱԿԱՑԻՑ ՀԱՅ ԺՈՂՈՎՐԴԵԱՆ ՎԻՃԱԿԸ ԵՒ ԱՌԱՋԱՐԿՈՒԹԻՒՆԸ

Առ Սրբազան Տէր Արիստակէս Արքեպիսկոպոս, Տեղապահ Պատրիարքի ամենայն Հայոց, և Նախագահ Յանձնաժողովական Խառն ժողովոյ Ազգիս, և այլն և այլն և այլն ։

Սրբազան Տէր,

Մեք ստորագրեալքս, բնիկք գաւառին Վասպուրականի, և որ առժամանակեայ կերպով Մայրաքաղաքիս մէջ կը գտնուինք, յանուն և 'ի խնդրանաց հայրենակցաց մերոց որ 'ի Վասպուրականի և 'ի շրջակայս նորա, կարևոր կը համարինք Ձեր Սրբազնութեան և մեծարգոյ Խառն ժողովոյ յատուկ խորհրդածութեանը ենթարկել հետևեալ դիտողութիւնները, խնդրելով որ այն դիտողութիւններէն իբրև եզրակացութիւն հանուած առաջարկութեան գործադրութեանը նկատմամբ Ձեր կողմանէ մասնաւոր ամեն ջանք ընելու հաճիք ընել՝ գիտելով որ պէտք է ըստ իրաւանց ։

Օսմանեան Տէրութեան հպատակ Հայազգի ժողովուրդքս որ 'ի Վասպուրականի և 'ի շրջակայս նորա, այն է՝ 'ի Վանայ մինչև 'ի Պայազիտ, 'ի Սղերդ, 'ի Պաշգալէ և 'ի Մուշ, տեսնելով թէ մեր Օսմանեան Օգոստափառ Սուլթան Ապտիւլ Ազիզ Կայսեր և նորա Նախորդին կողմանէ շնորհուած և բոլոր քաղաքականացեալ աշխարհէն հռչակուած Խաթթի Հիւմայուններուն արդարադատութեանը համեմատ, Նորին Վեհափառութեան բարերար դիտաւորութիւնն է որ իւր ամեն ցեղէ և դաւանութենէ եղող հպատակներն ամեն երջանկութիւն ունենան վայելելու կենաց, պատուոյ և ընչից ապահովութեան իրաւունքները որ լաւ կառավարուած ամեն երկրի մէջ քաղաքակրթութեան հիմունք համարուած են և կը վայելուին ։

Տեսնելով թէ Նորին Վեհափառութեան բարձր կառավարութիւնը բարի կամք ունի օր ըստ օրէ Վարչութեան ամեն ճիւղին մէջ մուծած յարմար օրէնքներով և լաւագոյն կարգադրութիւններով անխտիր բոլոր հպատակաց համար յիշեալ իրաւունքներն ու արտօնութիւններն իրականացնելու ։

Տեսնելով մանաւանդ որ նոյն-Բարձր կառավարութիւնը Տէրութեան այլ և այլ գաւառներուն և հեռաւոր սահմաններուն մէջ ապստամբ և յելուզակ ցեղերու կողմէն գործադրուած զրկանք և անկարգութիւններ վերցնելու կամ անոնց առաջն առնելու համար ամեն կարելի միջոց ձեռք առնելու զանց չըներ ։

Բայց տեսնելով նաև թէ Վասպուրական գաւառին և անոր շրջականերուն մէջ, Պայազիտ, Սղերդ, Պաշգալէ և Մուշ մէկտեղ առնելով, մեր Օգոստափառ Կայսեր դիտաւորութեանցն ու Նորին Բարձր կառավարութեան բարի կամացը հակառակ, կենաց, պատուոյ և ընչից իրաւունքներն ամենէն աւելի յաճախ և չարաչար բռնաբարուելու վտանգի մէջ են Քիւրտ կոչուած յելուզակաց ձեռքէն ։

Տեսնելով, կ'ըսենք, ասոնք՝ կը համարձակինք և կը փափաքինք Ձեր պաշտօնական միջնորդութեամբը մեր Վեհափառ Կայսեր Բարձր կառավարութեանը յարգանօք ներկայացնել մեր ապահովութեանը համար մեզի շատ կարևոր երևցած առաջարկութիւն մը որ հետևեալ դիտողութեան վրայ հիմնուած է ։

Վասպուրականի ժողովրդեան բազմաժամանակեայ փորձառութիւններուն մէկն էր որ, յիշեալ գաւառին և շրջակայից մէջ կենաց, պատուոյ և ընչից ապահովութիւնը վտանգի մէջ դնող Քիւրտ աւազակները զիրենք ամենէն աւելի բարոյական հարկաւորութեան մը մէջ տեսած են իրենց յելուզակութիւնները դադրեցնելու՝ ամեն անգամ որ Վան գաւառական կառավարութեան մը կեդրոն եղած է ․ և ընդհակառակն երբ Վան ուրիշ գաւառական կառավարութեան մը ստորակարգուելով իւր վարչական կարևորութիւնը կորսնցուցած է, յիշեալ յելուզակները սիրտ առած և զօրացած են, հետևապէս անոնց ըրած զրկանքներն ալ յաճախ և դիւրին եղած են ։

Այս փորձառութիւնը կը թելադրէ մեզ սա գաղափարը որ, եթէ Բարձրագոյն Դուռը հաճի՝ Վան, Կարնոյ վալիութենէն անկախ զատ վիլայէթի մը կեդրոն ընելու, թող ուրիշ Քաղաքական, Վարչական և Տնտեսական օգուտները որ 'ի հարկէ պիտի հետևին, Քիւրտերուն գործունէութեանը միջավայր եղող բոլոր այն երկիրները կատարեալ ապահովութիւն պիտի գտնեն ։ Եւ արդէն Վանայ աշխարհագրական դիրքը մէկ հարկաւոր հետևանքն է, ըստ որում Վան իր բնական դիրքը յարմար է այնպիսի կեդրոն մը ըլլալու՝ Հիւսիսէն, Հարաւէն, Արևելքէն և Արևմուտքէն իւր բոլորտիքն ունենալով Պայազիտ, Մուշ, Սղերդ և Պաշգալէ՝ որոնք յիշեալ յելուզակութիւններուն ընդ Քիւրտերուն սահմաններն են ։ Վանայ, իբրև Կարնոյ կառավարութեան ենթարկեալ մաս մը, կարևորութիւն չունենալն է, որ բոլոր այս երկիրներն ապահովութենէ կը զրկէ՝ համարձակեցնելով Քիւրտ յելուզակներն այն [illegible] յափշտակութիւններն ու սոսկալի սպանութիւնները գործելու նոյն իսկ Վանայ բոլորտիքը, գրեթէ մեր աչքերուն առջև ։ Այսպէս բուն Վանայ քաղքին շատ մօտ Ագրիպոյաս անուն Հայոց գիւղ մը գնալու առեն կ'սպաննուի Քիւրտերէն՝ գլուխը երկու քարի մէջ ջախջախուելով ։ Այգեստանին մէջ որ քաղաք կը համարուի կը խողխողի իւր տանը մէջ Փօշայեան Մարգարի որդի Գրիգոր անուն անձը և տունը կը կողոպտուի ։ Նոյնպէս քաղաքէն շատ հեռու չէր որ ծերունի հայր մը և երկու երիտասարդ որդիքը հունձ քաղելու առեն մերթալերթ մահուամբ կ'սպաննուին ։ Նմանապէս քաղքին և մօտակայ գիւղի մը մէջտեղը կը յօշոտի Կուլիկեան Պաղտասար անուն անձը որ երևելի [illegible] էր, և աւելի մօտերս՝ Սեդոյ անուն անձը, հետը քանի հոգւոյ չափ ընկերակից ունենալով ալ, Ասլան անուն Քիւրտ պէկէ մը նոյնպէս կը յօշոտի ։ Արդարև այս վերջին սպանութեան դէպքին մէջ, Պարսից սահմանին Աղանս գիւղն ապաստանող մարդասպանը տեղական իշխանութեան հրամանաւ Վան բերուելով դատաստանի կը հանուի, բայց ցաւալի է որ, ոճրագործին դէմ ականատես Քրիստոնեայ վկաներ մերժ ընելուն համար, տեղւոյն Առաջնորդ Պօղոս վարդապետի նախատանօք ատեանէն դուրս ելլել կը հրամայուի ժողովին Մօլլայէն որ Քրիստոնէից վկայութիւնը մերժ ընել օրինաւոր չէր համարեր ։ Կը թողունք բուն իսկ Վանայ մէջ Ս. Յակոբայ եկեղեցւոյն դպրոցին կրակի տրուիլը, ժողովուրդը ըստ սովորութեան Եկեղեցի հրաւիրող ժամկոչի մը սաստիկ դանահարութիւնը որուն հետևանքէն և մեռաւ իսկ ողորմելին, ուրիշ ժամկոչի մ'ալ նոյնպէս եկեղեցի հրաւիրած առենը գլուխը ջախջախուիլը ։ Ասոնք Քիւրտերու և անոնց արբանեկաց ձեռօք Վանայ մէջ և մօտ մօտերս կատարուած սպանութեանց և անգթութեանց միայն մէկ քանին են, թող աւելի հեռուները գործուած անթիւ եղեռնագործութիւնները, որոնք այն երկրին խաղաղասէր և Օսմանեան Տէրութեան հաւատարիմ հպատակները կենաց, պատուոյ և ընչից ապահովութենէ զրկելով ահի և սարսափի մէջ թողած են ․ վիճակ մը՝ որմէ առիթ առնելով Օսմանեան Տէրութեան ոսոխ դրացիներ՝ ժողովուրդը կը հրապուրեն գաղթականութեան, որոց փորձերը քանի քանի անգամ խափանած են Վան և ուրիշ այն կողմերը բնակող հաւատարիմ Հայազգիք ։ Բայց այս եղելութիւններն արդիւնք են Վանայ երկրորդական և աննշան կառավարութիւն մը ունենալուն ։

Ուստի, ստորագրեալքս, բոլոր Վասպուրականի և շրջակայից ժողովրդեան կողմէն կը պարտաւորինք Ձեզ, Սրբազան Հայր, որ այս մեր առաջարկութիւնը ներկայ Ազգային Խառն ժողովոյ ներկայացնելէն ետքը, յատուկ պաշտօնական թագրիրով մը, և, եթէ հնար է, մեր այս գրութեան թարգմանեալ մէկ օրինակովը բացայայտապէս հաղորդէք մեր բարեխնամ Կայսեր կառավարութեանը, ինչպէս որ Կայսերական բարձրագոյն հրամանաւ ձեզի տրուած պաշտօնին պարտաւորութեանց մէկն է պաշտօնական գործարան մը ըլլալ Ձեր Հոգաբարձութեանը յանձնուած ժողովրդեան պէտքերը նոյն բարձր Կառավարութեան յայտնելու, որ պատրաստ է, մեր Օգոստափառ Տիրոջը քանի քանի անգամ բացայայտեալ կամացը համեմատ, լսել ամեն աստիճանի և վիճակի հպատակաց կարօտութիւններուն նկատմամբ եղած աղերսներ, երբ օրինաւորապէս կը մատուցուին ։

Հաճեցէք, Սրբազան Տէր, ընդունել մեր խորին յարգանաց հաւաստիքը ։

Ձեր Հոգաբարձութեանը յանձնուած Հայ ազգէն՝ Վասպուրականի և շրջակայից ժողովրդեան կողմէն կ'ստորագրենք
Ստորագրութիւնք ։

Կոստանդնուպոլիս, 19 Ապրիլ 1869 ։

— Կալկաթայէն Մարտ 14 ամսաթիւ մ՚ հետևեալը կ ծանուցանեն Արշալոյս Արարատեան ։

Աւուրքս ինչ յառաջ Միրզա Մահամէտ Ալի խան անուն Պարսից հիւպատոս Պոմպայի՝ եկեալ 'ի Կալկաթա վասն առանձին խնդրոյ միոյ ընդ իշխանութեան քաղաքիս, եկեղեցականք մեր ընդ քանի մի Ջուղայեցւովքս յայց եկին նմա յարգանօք 'ի պատիւ վեհ․ Շահին ։ Յիշեալ Պաշտօնատարն մարդասիրութեամբ ընկալեալ զհայազգի այցելուս իւր՝ 'ի մէջ այլոց պատուաց հարցանէ նոցա ասելով ․ Ո՛ր քաղաք քաղցր է 'ի հաճոյս ձեր՝ հայրենին ձեր թէ Կալկաթա ։ Պատասխանեալ նոցա՝ ասեն ․ Հաճոյք կամաց՝ զնին յանդորրու կեանս ․ զի ուր սիրտ հանգչի՝ անդ և կեանք հանգիստ է ։ Այն, սակս պարզ օդոյ, ջրոց մաքրութեան և այլ կենսական նիւթոց՝ հայրենին մեր Ջուղա ցանկալի ․ իսկ սակս օրինաց և անդորր կեցից Կալկաթա է գովելի ։

Այժմ, ասէ Միրզա Ալի խան, վիճակ հայրենի երկրին ձերոյ բարեկարգեալ է և չէ ըստ անցելոյ ժամանակաց ․ ուստի եթէ համեստիք վերադառնալ անդ, մեծապէս ունիք մխիթարիլ ամենայն հաճոյականօք ։ Պատասխանեն մերայինք ․ Թերևս արդար է ասացեալն ձեր, սակայն ներքին անկարգութեան՝ անհնարին երկի մեզ հանգչել ։ — Ո՞ր է այն ներքին անկարգութիւն, հարցանէ Հիւպատոսն Պարսից ։ Ասեն ․ Անիրաւ վճիռք դատաստանի գենովեաց՝ որք վերերին յուրացեալս հաւատոյ մերոյ ։ [illegible] սափ և ժառանգաւոր եօթն ազգ զոյից ընտանեաց ․ և այսպէս հարստահարեալ անպարտից՝ բազումք ստիպին վաճառել լինել անդարձ շուտով ։ Եւ ասացեալս անդրժելի ապացոյց է անկումն և կործանումն տանց և շինից 24,000 գաղթականաց Հայոց Ջուղայու ․ յորոց այժմ հազիւ հազ պատակ առնուամբ մնացեալ տունք երեք հարիւր ։ Կործանմանս այսորիկ պատճառ եղեն ներքին խռովութիւնք հարկապահանջից և տոտաքին անլուր բռնութիւնք գենովեաց ։ Արդ՝ գիտելիք թէ հարկապահանջութիւնն բարեկարգեալ է այժմ ․ իսկ զրունութիւն գենովեաց ոչ կարող է մեղմել ․ զի ասեն [illegible] ․ այսինքն հրաման Աստուծոյ այս է, որ վան և թագաւորք իսկ ոչ համարձակին ջնջել զվճիռս նոցա ։

Գրեցից, ասէ Միրզա Մահամէտ Ալի խան, և ծանուցից Թագաւորին՝ տալ բառնալ զայս աղէտ 'ի տանէ Հայոց Ջուղայու ․ ուստի և դուք ընդ այս անհոգ եղիջիք ։ — Գոհ եմք յոյժ զմարդասիրական խնամոց ձերոց, պատասխանեն ազգայինն այցելուք, սակայն և այնպէս փորձիւ գիտեմք թէ գենովեաց Պարսկաստանի ոչ հնազանդին Թագաւորական հրովարտակաց՝ որք յայսպիսի խնդիրս վերաբերին ․ քանզի համարին զինքեանս զօրաւոր դոլ տիրական ժառանգաւոր իշխանութեան ։ — Ոչ ոչ այդպէս, կրկնէ Խանն, զի այժմ Պարսկաստանի կառավարութիւնն զատ է և գենովեաց խմբովն վիճակ զատ ․ զի օր աւուր փոփոխին շրջանք և արժանաւոր բարեկարգութիւնք տեղի առնուն ․ լսելոց էք և դուք ապա և ուրախանալոց էք յոյժ յոյժ ։

Յետ այսց բանից՝ ազգային այցելուք օրհնելով զԹագաւորն և զխանն՝ ելանեն անտի օծմամբ թաշկինակաց իւղով անուշիւ ըստ սովորութեան Պարսից ։

ԱՅԼ ԵՒ ԱՅԼՔ

ՍՈՒԼԹԱՆԻՆ ԿԵՆԱՑ ԴԷՄ ԿԵՂԾ ԴԱՒԱԴՐՈՒԹԻՒՆ ՄԸ

Փալմըր անունով ազգաւ Ամերիկացի և ձեռքը Անգլիական անցագրով յանկուցն մէկը, համանմանաբար Մանաւի 'ի գերև եղած ձեռնարկը Պոլսոյ մէջ ինք յաջողցնելու փափաքով, Կայսեր կենաց դէմ լարուած դաւադրութիւն մը իբր թէ կ'յայտնէ, և անոր կենաց ապահովիչը ըլլալու փառքը վայելեան մը անոր աչերը կ'շլացնէին ։ Բարեբաղդաբար իր յանկուցն հնարքը չ'յաջողելով ձեռք կ'անցնի և հիմա դատաստանը տեսնուելու վրայ է ։ Այս մի և նոյն անձն է որ քանի մը տարի առաջ մի և նոյն փորձը ըրած էր Աւստրիոյ Կայսեր կենաց նկատմամբ, և իր խարէութիւնը ինչպէս հոս նոյնպէս և Աւստրիոյ մէջ չ'կրցաւ յաջողիլ ։

— Տարբեր քաղաքակրթեալ երկիրներու մէջ գինովութեան զոհ եղողներու հետաքրքրական ցուցակ մը ։

Անգլիոյ մէջ տարին 50,000ի չափ մարդ կ'մեռնին գինովութենէ, որոց 12,000ը կին են ։ Ամերիկայի մէջ 40,000. Ռուսիոյ մէջ 10,000. Պէլճիքայի մէջ 4,000. Գաղղիոյ մէջ 1,500 ։ Սակայն ոգելից ըմպելիներով գինովութեան մասին բոլոր ազգերը գերազանցողը Ամերիկա է ։ Տօքթէօր Էվըրէսթի տեղեկագրին համեմատ Միացեալ-Նահանգաց մէջ ութ տարուան միջոցին Երեք հարիւր հազար մարդ զոհ եղած են գինովութեան ։

— Չինաստանի Թագաւորին մայրը աֆիոնի թշնամի ։

Անգլիական և Չինական լրագրերը հետևեալ դէպքը կը պատմեն, կ'ըսէ Էքօ ։ Չինաստանի երիտասարդ Թագաւորը հետաքրքիր ըլլալով աֆիոնի ոյժը ինքնին փորձել՝ ծխախոտ մը քաշեց և բնականաբար հիւանդացաւ բաւական ներգործութիւն կրելով ։ Թագուհի մայրը տեսաւ ինքը և խուզարկութիւններէ ետք իմացաւ որ գլխաւոր ներքինիներէ մին առած էր ափիոնը Ն. Վեհափառութեան, ուստի գլխատել տալով զանի որպէս զի պալատականներուն օրինակ ըլլայ՝ նոյնպէս և ափիոնի գործածութեան դէմ նոր յայտարարութիւններ զրկուեցան բոլոր կայսրութեան մէջ:

— Կ'հաստատեն թէ Աւստրիոյ Ֆրանսուա–Ժօզէֆ կայսրը իր մօտալուտ ճանբորդութեան մէջ Պօլիս պիտի հանդիպի: Դեռ մինչև հիմա Աւստրիոյ Կայսր մը Պօլիս եկած չէ, ուստի Տաճկաստանի մայրաքաղաքին առաջին այցելութիւնը ներկայ Կայսրը բրած պիտ'ըլլայ:

— Թիավարութեան դատապարտուած Կրետայի ապըստամբապետները, որոնք անձնատուր ըլլալու համար արուած պայմանաժամին լրանալէն ետք սակաւ ին գիմադրութեան և ապստամբութեան վիճակի մէջ ձեռք ինկած էին՝ Կայսերական բարեխնամ կառավարութենէ ազատութիւն ստացան: Սկիզբէն 'ի վեր Օգոստ. Ինքնակալին փափագը, Կրետայի ապստամբներու նկատմամբ, ստուգիւ գովութեան և զարմացման արժանի է:

— Կ'ըսուի թէ Եւրոպական տէրութիւնները խորհուրդ առած ըլլան Բ. Դրան որպէս զի Կայսեր հպատակներէ և Քրիստոնեաներէ ևս զօրք առնուի Տաճկական բանակի համար, և թէ Բ. Դուռը այս բանս կարգադրելու զբաղած ըլլայ:

— Օգոստ. Սուլթանը կ'ուզէ Պօլսոյ մէջ ծախու առնուած երկու երկաթապատ պատերազմական նաւերը ետ տալ 500,000 ֆրանք վնասով: Այս շոգենաւերը վճարուած գինին արժողութիւնը ամենևին չունենալէ զատ նաև մեծ թերութիւններ ունին:

ՏԵՂԱԿԱՆ ԼՈՒՐՔ

Իզմիրի քաղաքային ժողովոյ ատենապետ Սիւլէյման պէյը իր հրաժարականը տուաւ. որ ընդունելով անոր տեղ յանկացուեցաւ Տէֆտէրտար Էֆէնտին առժամանակեայ կերպիւ:

Նոյնպէս փոխ–ատենապետ Մեծ. Մարտիրոս աղա Թաղթաղեան իր պաշտօնէն հրաժարեցաւ:

Քաղաքային ժողովը գժբաղդաբար սկիզբէն 'ի վեր իր պաշտօնը չկրցաւ խիղճի մտօք կատարել, և աւալ թէ քաղաքացւոց համակրութիւնը կարող չեղաւ ստանալ, և թէ երկրիս նպաստաւոր և օգտակար միջոցներու գործադրութեան մեծագոյն մասամբ անփոյթ գտնուեցաւ, որոնք իր պաշտօնին ամենակարևոր մասերն էին: Կայսերական կառավարութիւնը երկրին օգտակար և նպաստաւոր միջոցներու գործադրութեան համար հրամաններ և արտօնութիւններ կ'շնորհէ, եթէ անոնք չեն գործադրուիր՝ յանցանքը մի միայն անփորձ ընտրութեան մ'է, և այս անգամ կ'յուսանք թէ փորձառութիւնը և ուղղամտութիւնը, առանց մասնաւոր դիտումներու, ընտրողաց առաջնորդ պիտ'ըլլան և ընտրեալներու դաս մը:

— Իզմիրի գաւառին ոչխարաց վրայ տասանորդի վաճառումը 8,730,082 ղուրուշ բռնեց. զոր օրինակ, Այտընի սանճախը 2,015,000, Սարուխանի կամ Մանիսայի սանճախը 5,005,000, Մէնթէշէի սանճախը 1,395,082 և Իզմիրի սանճախը 2,315,000: Ընդ. ամէնը 8,730,082 ղուրուշ:

— Անցեալ շաբաթ Անգղիայի տուն մը մանող գողերէն մին բռնուեցաւ:

— Տօքթէօր Ալւհրսէն Հիւսիսային Ամերիկոյ հիւպատոսանի նորընտիր Գործակատարը անցեալ շաբաթ Իզմիր հասնելով իր պաշտօնին ձեռք զարկաւ:

— Վսեմ. Խաւայիլ փաշան որ անցեալ կիւրակէ մեկնեցաւ շրջակաները այցելութեան երթալու համար՝ յաջողիր է բոլոր մարախները անհետել: Վսեմ. Կուսակալին գործը երախտագիտութեան արժանի է:

ՎԱՃԱՌԱԿԱՆԱԿԱՆ ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆՔ

Զմիւռնիա, 2 Մայիս 1869. Ուրբաթ:

Բամպակ. Նախընթաց թուէս ետքը 1300 պալեայի չափ ծախուեցաւ, գին՝ 510էն մինչև 555 ղուրուշի ըստ տեսակին:

Շաբաթ և երկուշաբթի օրերն շուկանիս հանդարտ էր, սակայն հետևեալ օրերն հեռագրական անյաջող լուրերուն տարաձայնութեանը վրայ անմիջապէս զանկթարին 20–25 ղուրուշ ինկաւ համեմատաբար անցեալ շաբթուան, թէպէտ և հետևեալները ծանր և վառանդալի ընթացք մը կ'գուշակէր՝ սակայն երեկ և այսօր շուկանիս հոգի առնելով 5/600 պալեայի չափ ծախուեցաւ առանց գնոյ տարբերութեան:

Փալամուտ. Անգղիոյ համար ծախուեցաւ 8000 կենդ. գին՝ 80–94. իսկ Թրիեստի համար 1400 կենդ. գին՝ 100–122 ըստ տեսակին: Տէփօզիդօնիս սաստիկ կ'զիլոսի. գրեթէ 160,000 կենդինար ապրանք կայ. սակայն ընտիր տեսակներն հազուագիւտ և բարձր գին կ'վճարուի:

Ափիոն } Նախընթաց թուէս ետքը ամենևին փոփոխութիւն մը տեղի չունեցաւ:
Պօյա }

Լիվրբուլ, 30 Ապրիլ 1869. Ուրբաթ:

Բամպակ. Շաբաթական ծախքն էր 53,850 պալեա, որոց մէջ կային 1700 պալեա Իզմիրի $8^3/_4$ փէնսայէն մինչև $9^1/_4$, $10^3/_8$, $10^5/_8$, $10^7/_8$ և 11 փէնս: 31,302 պալեա այս շաբաթ ապրանք գալով ներկայ տէփօզիդօնիս բարձրացաւ 351.540 պալեայի ընդդէմ 526,230 անցեալ տարւոյն, և ծովուն երեսը կայ 486,000 պալեա ընդդէմ 411,000 անցեալ տարւոյն:

Շաբթուս ընթացքը մէկ շաբաթէ 'ի վեր հանդարտ է, և գրեթէ $^1/_8$ փէնսայէն մինչև $^1/_4$ ինկան, որուն պատճառն է Հնդկաստանէն և Չինաստանէն չափազանց ապրանք բեռնաւորուիլը, Մանչէսթէրի արդարագործութիւնն ալ հանդարտ կերպարանքի մէջ էր, և մեծագոյն մասին գաղափարն այն է թէ ներկայ գիներով պիտի տևանի:

Փալամուտ. Շաբաթական ծախքն էր 150 դօնօ. աղէկ նոր՝ 16էն մինչև 16.10 Անգղ. լիրա, միջակ՝ 14 Անգղ. լիրա, և ընտիր տեսակ մին ալ 17.10: Ներկայ տէփօզիդօն է 4600 դօնօ, և ամսական ծախքն է 1200 դօնօ: Զմիւռնիոյ մէջ բարձր գինով ապրանք ծախուելուն և շոգենաւերով հասած ապրանքներուն մեծագոյն մասը երկրորդական տեսակ ըլլալուն պատճառաւ՝ շահաբերք և սպառողք շփոթած մնացեր են, որ գործողութեան արգելք կ'ըլլայ: Ընտիր տեսակներուն ապրանքի տէրերն հաստատ են, և քանակութիւնը քիչ:

Պօյա. Փիացանիս ամենևին փոփոխութիւն մը ստացած չէ. 164 պալեայի չափ ծախուեցաւ. Տաճկաստանի տեսակ 64.6 շէլինի: Ավինեօնի և Նաբօլիի լուրերն անյաջող են:

և առոր պատճառաւ ձմեռը շատ անձրևներ գալով նոր հունձքին մեծագոյն մասին աւրուին է, որով կ'հաստատեն թէ նոր ընքօլդան կարճ պիտ'ըլլայ, և եթէ ստուգիւ՝ գիներն ամսէ մը ետք բարձրանալուն յոյս կ'երևի:

Ափիոն. Շաբթոյս սկիզբէն 'ի վեր շատ քիչ գործ տեսնուեցաւ թէ տեղւոյն սպառման և թէ դուրսի համար, և գիներն են 35էն մինչև 43.6. ապրանքի տէրերն յօժարութիւն կ'ցուցնեն աւելի շատ վար գինի յանձնառու ըլլալ: Ներկայ տէփօզիդօնիս է 242 սնտուկ (որմէ 46ը պզտիկ են) ընդդէմ 438 սնտուկ անցեալ տարւոյն:

Ճէհրի } Հանդարտ վիճակի մէջ կ'գտնուին, թէպէտև
Մազը } մանր ծախքեր կ'ըլլան սակայն գիներն գոհացուցիչ
Քիթրէ } չեն:

Լիվրբուլ, 3 Մայիս. Երկուշաբթի:

Այսօր բամպակի փիացանիս թոյլ էր և միայն 8000 պալեա ապրանք ծախուեցաւ, որոց մէջ կային 200 պալեա Իզմիրի, գին՝ 10 1/4էն մինչև 10 3/4 փէնս:

Հեռագրական լուր 'ի Լիվրբուլէ. 12 Մայիս:

Իզմիրի բամպակ՝ 10 1/4էն մինչև 10 1/2 փէնս, ընթացքը հանդարտ. ծախք քիչ: Փալամուտ և պօյա հանդարտ:

ԱՄԵՐԻԿԱ, 5 ՄԱՅԻՍ

Բամպակ $28^3/_4$ սանդիմ. — Փէթրօլ $33^1/_4$ սանդիմ:

ԸՆԹԱՑՔ ՓՈԽԱՆԱԿԱԳՐԻ

Զմիւռնիա, 2 Մայիս:

Լօնտրայի վրայ երեք ամիս պայմանաժամով					428 –429
Փարիզի	»	»	»	»	$263^1/_2$–265
Թրիեստի	»	»	»	»	410 –414

ԾՈՎԱՅԻՆ ԱՊԱՀՈՎՈՒԹԻՒՆՔ

ԼՈՆՏՈՆԻ ԵՒ ԱՐԵՒԵԼԵԱՆ ՇՈԳԵՆԱՒՈՎ ՓՈԽԱԴՐՈՒԹԵԱՆՑ ԱՊԱՀՈՎՈՒԹԵԱՆ ԳՐԱՍԵՆԵԱԿ

137 ԼԻՏՆՀՕԼ ՍԹՐԻԴ ԼՈՆՏՐԱ

Այս ընկերութեան գործակալը պատրաստ է խիստ շահաւոր պայմաններով ապահովել որ և է ծովային վտանգներու դէմ թէ շոգենաւով ըլլայ և թէ առագաստանաւով:

Գիներու և ուրիշ տեղեկութեանց համար ուզողը կրնայ դիմել այս գործակալութեան գրասենեակը Մ. Քուպնէրիի ֆէրխանէին մէջ, Ֆրանկաց թաղ:

ՀԷՆՐԻ Է. ՌՕԶ, գործակալ:

ՍԸՆ ՖԱՅՐ ԳՐԱՍԵՆԵԱԿ

ՀՐԿԻԶՈՒԹԵԱՆ ԴԷՄ ԱՊԱՀՈՎՈՒԹԵԱՆՑ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ 1710ԻՆ ՀԻՄՆՈՒԱԾ

Այս ընկերութիւնը կ'ապահովէ շէնքերու, կարասիներու, վաճառքներու և գործատուներու հրկիզութեան դէմ, և այն, որոնք Իզմիրի և անոր շրջակայից մէջ կ'գտնուին:

Սըն Ֆայր գրասենեակը մի և նոյն օգտակար միջոցները կու տայ ապահովեալներու ինչ որ ուրիշ ընկերութիւններ կրնան տալ:

Պահանջուած գիները մասնաւոր դաշնագրութեամբ մը նոյնն են, ինչ որ տեղւոյս մէջ ուրիշ Անգղիոյ ընկերութիւններ կ'պահանջեն:

Ստորագրեալը արտօնութիւն ունի հոս ընկերութեան դէմ բոլոր պահանջումները գոհ ընել:

ՀԷՆՐԻ Է. ՌՕԶ, գործակալ:
Քուպնէրիի ֆէրխանէն, Ֆրանկաց թաղ, թիւ 10
և շուկան նէնի խանի մէջ (Ըսպարթալը Նոր խան):

ՌՕՅԱԼ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ ԱՊԱՀՈՎՈՒԹԵԱՆ

ԱՊԱՀՈՎՈՒԹԻՒՆՔ ԸՆԴԴԷՄ ՀՐԿԻԶՈՒԹԵԱՆ ԵՒ ԿԵԱՆՔԻ ՀԱՄԱՐ

Դրամագլուխ	լիրա	սթէրլին	2,000,000
Սեպհական արժեթուղթք աւելիքան	»	»	1,500,000
Տարեկան եկամուտ	»	»	800,000

Իզմիրի և շրջականերու մէջ գտնուած ամեն տեսակ շէնքերու, ինչպէս տուներու, խանութներու, մթերանոցներու, գործատուներու, նոյնպէս մեքենաներու, կարասիներու և վաճառքներու հրկիզութեան դէմ, առանց զատ նաև ԿԵԱՆՔԻ համար կ'ապահովէ:

Փ. ՏԱԹՕՏԻ
Թիւ 39, Զաւրօլ խան:

Ապրիլ 8էն մինչև Մայիս 8 Իզմիրի նաւահանգիստէն Եւրոպայի համար բեռնաւորուած քանի մը գլխաւոր ապրանաց ցուցակը:

ԱՆԳՂԻԱ, ԳԱՂՂԻԱ ԵՒ ՍՊԱՆԻԱ

1869 Ապրիլ	Առագաստանաւոյ նաւ.	Շոգենաւ	Տեսակ ընկերութեան	Տեղի ժամանելոյ	Փլմտ կենդ.	Պօյա պալ.	Բմպկ պալ.	Ճհր չվ.	Սնկր սնտ.	Ափ. սնտ.	Եղ. ձէթ վարէլ	Ձէթ կենդ.	Գարի քիլէ	Կօմս սնտ.
8	Օկիւստ Սօֆի	....	Բրուսիական	Անվէրս	....	....	....	....	....	....	....	....	....	....
9	....	Մէտուէյ	Անգղիական	Լօնտօն	4079	....	....	....	186	....	20	....	19000	....
10	....	Թամէ	Մեսաժէրի	Մարսէյլ	302	....	678	20	73	....	....	....	....	....
13	....	Մալթա	Անգլ. Մաքիվէր	Լիվրբուլ	4963	....	1603	44	36	21	....	....	....	....
14	Նաւամա	....	Նորվէկ	Պերկէն	....	....	....	....	....	....	....	....	....	....
17	Ան Հօլլանտ	....	Անգղիական	Ֆօլմութ	3190	....	....	....	....	....	....	....	16000	....
»	Օրիէնթըլ	....	»	»	2734	....	....	....	....	....	....	....	....	....
»	....	Բրօթիս	Գաղղիական	Մարսէյլ	....	....	28	....	....	....	....	....	....	....
18	....	Մարիա Թէրէզա	Աւստ. Թօնէլլօ	Պարչելօնա	....	....	3324	....	....	....	....	5000	....	....
20	....	Թամաթիս	Մեսաժ. Գաղ.	Մարսէյլ	....	....	123	54	....	....	7	....	....	....
21	....	Կրէշիէն	Անգ. Ճօն Գլին	Լիվրբուլ	1762	....	1112	....	236	26	89	119	....	....
24	Օսէան Տրիֆդ	....	Անգղիական	Ֆօլմութ	....	....	....	....	....	....	....	....	19594	....
»	Սգեալինկ	....	»	»	3486	....	....	....	....	....	....	....	....	....
28	Հէրրիէթ	....	»	Լիվրբուլ	2460	....	....	....	....	....	....	....	....	....
29	....	Նիէմէն	Մեսաժէրի	Մարսէյլ	....	....	291	....	....	2	....	....	....	....
»	....	Սայտըն	Մաքիվէր	Լիվրբուլ	3304	54	1765	....	176	25	308	....	....	4
Մայիս														
1	Մատլէն Ան	....	Անգղիական	Ֆօլմութ	2630	....	....	....	....	....	....	....	....	....
»	Բինկլիտէր	....	»	»	3929	....	....	....	....	....	....	....	....	....
8	Բրէնտէս Ալէքսանտրա	....	»	»	2673	....	....	....	....	....	....	....	....	....
»	Էմիլի	....	»	»	2737	....	....	....	....	....	....	....	....	....
					38249	54	8924	118	707	74	424	5119	54594	4

ԻՏԱԼԻԱ

1869 Ապրիլ	Առագաստանաւոյ նաւ.	Շոգենաւ	Տեսակ ընկերութեան	Տեղի ժամանելոյ	Փլմտ կենդ.	Պօյա պալ.	Բմպկ պալ.	Ճհր չվ.	Սնկր սնտ.
10	....	Ամերիգա	Լոյտ. Աւստր.	Թրիեստ	....	34	514	....	16
12	....	Մարս	» »	»	....	....	20	....	....
17	....	Արքիելա	» »	»	446	....	706	27	....
»	Սվէստա	....	Աւստրիական	»	87	....	150	....	....
19	....	Սաթուրնօ	Լոյտ »	»	....	....	124	....	....
24	Բօսֆօրօ	....	Աւստրիական	Մեսսինա	1150	....	....	....	....
25	....	Ստամպուլ	Լոյտ. Աւստր.	Թրիեստ	536	....	132	....	....
26	....	Վէնուս	» »	»	265	....	162	....	....
29	Էֆթիմիա	....	Յունական	Մեսսինա	2000	....	....	....	....
Մայիս									
1	Միլէվա	....	Աւստրիական	Թրիեստ	125	....	....	....	....
»	Ալէքսանտրօս	....	Յունական	»	2000	....	....	....	....
»	Ճիօվաննի	....	Իտալական	Մեսսինա	600	....	....	....	....
»	....	Մասսիլիանօ	Լոյտ. Աւստր.	Թրիեստ	207	....	407	....	....
3	....	Վեստա	» »	»	....	....	92	....	....
					7416	34	2307	27	16

ՇԱԲԱԹԱԿԱՆ ՕՐԱՑՈՅՑ

Օր	Հ. Մայիս	Լ. Մայիս	Տ. Սէֆէր	
Շ	3	15	4	Եգ. շոգ. 'ի Պօլիս: Աւստ. շոգ. 'ի Թրիեստ, 'ի Պօլսոյ, յԱղէք. առուղ: Գալ. շոգ. 'ի Պօլսոյ:
Կ	4	16	5	Աւստ. շոգ. յԱղէք. ուղ: Գալ. շոգ. 'ի Սիրիա:
Բ	5	17	6	Աւստ. շոգ. 'ի Պօլիս: Գալ. շոգ. 'ի Սիրիայէ:
Գ	6	18	7	Գաղղիական շոգենաւ 'ի Ֆրանսա և 'ի Պօլիս:
Դ	7	19	8	
Ե	8	20	9	Եգ. շոգ. 'ի Պօլսոյ: Աւստ. շոգ. 'ի Թրիեստէ:
Ո	9	21	10	

ԽՄԲԱԳԻՐ–ՏԷՐ Ս. ՄԻՐՋԱՆ
ԶՄԻՒՌՆԻԱ.
ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ ՏԷՏԷԵԱՆ